

Ք Ա Ժ Ն Ե Պ Ի Ն

ՍԻՈՆԻ Տարեկան բաժնեգիրն է՝ բոլոր երկիրներու համար՝ Անգլ. Շիլին 6:

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՆՆԻԿ Է

Հասցէ՝ *Rédaction de la Revue Arménienne SION*

Patriarcat Arménien, Jérusalem-Palestine

ՁԵԿՈՅՑ Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ

1. — Նկատելով որ Ալեքանդրեքի Սաննագին եւ ձեպէլ Մուսայէն բազմահազար հայեր խունապահար կը զաղբեն դեպի Լիբանան եւ անոնցմէ շատերը անդոնի եւ խեղճութեան մասնուած են, Միութեանս Կեդր. Վարչութիւնը, տեղի տալով ամէն կողմէ իրեն ուղղուած կոչերուն, հարկ տեսաւ ձեռնարկել համազգային հանգանակութեան մը, երիցս բունազրկուած մեր տարաբախտ հայրենակիցներուն եղբայրական օգնութիւն ընծայելու համար: Այդ առթիւ Բարիդի մէջ կազմուեցաւ Արեւիկարգ Կեդր. Յանձնաժողով մը, որուն Նախագահութիւնը ստանձնեց Միութեան Պատուոյ Նախագահ Վսեմ. Առաքել Փաշա Նուպար, սրբառուչ կոչ մը ուղղելով զաղուրաճալութեան եւ 100,000 Ֆրանքի գումարով մը բանալով հանգանակութիւնը. նոյնպէս Տիկին Ն. Դաբամանեան եւ Վահրամ Պէյ Նուպար 50,000 Ֆրանքով մասնակցեցան:

Միեւնոյն ատեն հեռագրով Պէյրութ փոխադրուեցաւ 1,300 անգլ. ոսկի:

Այս Յանձնաժողովը որոշեց իր կարգին կոչ ուղղել որ ամէն հայ զաղուր իր մասնակցութիւնը բերէ սոյն եղբայրական օգնութեան գործին, կազմելով տեղական յանձնախումբեր:

2. — Կեդր. Վարչ. Ժողովը, իր վերջին նիստին մէջ, կարգ մը կարեւոր ձեռնարկներու եւ նպաստներու մասին որոշումներ տալով, գլխաւորաբար վաւերացուց Պէյրութի մէջ յարաշիկայ Հոկտեմբերին Ազգական Բարձրագոյն Նախակրթարան մը հաստատելու ծրագիրը: Այդ Վարժարանը պիտի կրէ Օր. Դարուհի Յակոբեանի անունը, իր յիշատակին համար իր ծնողաց կողմէ Միութեանս կտակուած հիմնադրամէն վարկ մը բացուած ըլլալով յօգուտ այդ Կրթարանին:

3. — Մասնաւորաբար Հ. Բ. Ը. Միութեան նպաստընկալ եւ սեփական վարժարաններուն վիճակը ուսումնասիրելու եւ տեղական Մասնաժողովներուն հետ համախոհաբար բարելաւելու պատշոնով, Գանիլէի Գալուստեան Վարժարանի, Մելգոնեան Կրթ. Հասասութեան եւ Կալկարայի Հեմարանի նախկին Տնօրէն Տ. Գրիգոր Կիրակոսեանը առժամապէս նշանակեց Կրթ. Ընդհ. Քննիչ:

Տ. Կիրակոսեան անմիջապէս պիտի այցելէ Յունաստան, Պուլկարիա եւ Սուրիա:

ԳԻՒԱՆ

Բարիկ, 24 Յուլիս 1939

ԸՆԴՀ. ՏՆՕՐԷՆՈՒԹԵԱՆ

ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ

ՍԱՆՃԱԳԻ ԵՒ ՃԷՊԷԼ ՄՈՒՍԱՅԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒՆ

Նոր աղէտ մը, ազգային աղէտ մը, խոր անձկութեան կը մասնէ զարձեայ զաղուրանայութիւնը:

Ալէքսանտրէի Սանճաղէն, մասնաւորաբար Ճէպէլ Մուսայի շրջանէն, հազարաւոր հայեր, խուճապահար, կը պատրաստուին մեկնիլ դէպի Լիբանան, երբայ միանալու համար օրէ առաջ զիրենց կամիւնով զաղրականներուն: Կ'երեւայ թէ ասոնց թիւը 13,000ի կը հասնի:

Դժբախտաբար ոչ ոք պիտի կրնար այլեւս արգիլել այդ ահապաղար, որ հոգեխռով տալանալի մը խնդիր հետեւանմէն է, որովհետեւ ոչ ոք պիտի համարձակէր երաւիտարել տրուած հաւաստիներուն իրականացումը, ներկայ աննպաստ պայմաններուն մէջ:

Եւ սակայն երիցս աղիտանար այդ բազմահազար ժողովուրդին անդիմադրելի զաղորդ մտալկիչ հարցեր կը դնէ արտասանմանի հայութեան առջեւ, որոնց զլխաւորն է անոնց փոխադրութեան եւ պատշաճաբան համար անհրաժեշտ եղող նախնական օգնութեան անհրաժեշտութիւնը:

Պարզ է թէ մեր տարաբախ հայրենակիցներ բնա՛ւ չեն կարող իրենց սեփական ուժերուն վրայ տեւէ յոյս դնել, որովհետեւ տուն տեղ լինելով հապառապ կը փախչին եւ արդէն մեծ մասամբ չ'աւուրներ են, նոյն իսկ հոգաւորացի:

Հետեւաբար, իրենց տարաբնակ աւելի բախտաւոր ազգակիցներուն վրայ կը դնեն իրենց միա՛կ յոյսը, փութելութեան յոյսը իրենց համար, երբ վաղուան անգղոյր երէկուան արհաւիրքներու յուճեւորով կ'ալեկոծէ իրենց անարբէկ հոգիները:

Հեզոյնեւ յայտնի կ'ըլլայ որ օտար օգնութեանց մասին պէտք է մեծ յոյսեր տածել, այնպէս որ ամէն կողմէ բախանձազին դիմումներ կ'ըլլան Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, որպէսզի ինք ստանձնէ այդ եղբայրական օգնութեան գործը, համաժողովրդային հանգանակութեան մը ձեւաւորելով ամփոփապէս: Այդ միտումով Անթիլիասի Կարողիկոսարանին մեզի ուղղած կոչը ա՛յնքան ցնցող է, որ բոլոր չի տար մեզի տեւէ վարանում ցոյց տալ այն մեծ նիւթին համար որ մեր Միութենէն կ'ակնկալուի ազգովին: Դեռ երէկ Կորթոզ. Ընդհ. Փոխանորդ Գեռ. Սարանեան Արեւայիսկոպոսի եւ Հայ. Կար. Պատրիարքութեան Փոխանորդ Արհ. Քեփեմեան Գերապայ-ժառի ստորագրութեամբ հեռագիր մը ստիպողական նպատակ մը պէտք կը շեշտէ:

Բնականաբար փութացինք, ինչպէս միշտ, այս անգամ ալ մեր առաջին օլնութիւնը հեռագրով հասցնել Պէյրութ, բայց կը խոստովանինք թէ պէտք է այնքան մեծ է եւ ստիպողական որ լարուած ջանքերով եւ կարեւոր զօնադրութիւններով միայն կարելի պիտի ըլլայ մտաւելլ այս սուր աղէտին դէմ: Ուստի կոչ կ'ուղղենք ամէն սրբացաւ հայու որ առանց վայրկեան մը կորսնցնելու իր լուսմանդնէ Սանճաղի եւ Մուսա Տաղի հայ զաղրականներու օլնութեան համազգային զանձանակին մէջ:

Հ. Բ. Ը. Միութեան հովանիին ներքեւ Բարիզի մէջ կազմեցինք Կեդր. Առաջարկ Յանձնաժողով մը, որուն վստահ ենք թէ իրենց դրական գործակցութեամբ անվերապահ օժանդակութիւնը պիտի բնծայեն ո՛չ միայն Բարեգործականի տեղական Մասնաճիւղները, այլ եւ զաղուրանայ բոլոր հայրենակցական եւ բարեօրինական կազմակերպութիւնները, անգամ մը եւս ցոյց տալու համար թէ հայ ժողովուրդը միացուած ջանքերով կրնայ հրաշքներ գործել, եւ թէ ամիկա համերաւս եւ միաբան է՝ երբ ազգը աղէտի մը կամ վստահի մը կ'ենթարկուի:

Բարիզ, 20 Յուլիս 1839

Պատուոյ Նախագահ Հ. Բ. Ը. Միութեան
Նախագահ Օլնութեան Կեդր. Յանձնաժողովի

ԱՌԱՔԵԼ ՓԱՇԱ ՆՈՒՊԱՐ

ԾԱՆ. — Կը խնդրուի նուէրներ եւ հանգանակուած զուարճներ փութացնել Կեդր. Արհ. Յանձնաժողովի զանձապահ Տ. Լեւոն Կ. Կէրասի, 11 Square Albion, Paris:

ԶԵԿՈՅՑ ԱՐՏԱԿԱՐԳ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՉՆԱԺՈՂՈՎԻ
Ի ՆՊԱՍՏ ԱԼԵԲՍԱՆՏՐԷԹԻ ՍԱՆՃԱԳԻ ԵՒ ՃԷՊԷԼ ՄՈՒՍԱՅԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ
ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ

Հայկական Բարեգ. Ընդհ. Միութեան Կեդր. Վարչութեան Նախաձեռնութեամբ եւ հովանաւորութեամբ կազմուած Արտակարգ Կեդր. Յանձնաժողովս, որուն պաշտօնը պիտի ըլլայ կաշմակերպել եւ ղեկավարել Ալեքանտրէի Սաննազի եւ Ճեպէլ Մուսայի աղիտահար զաղթականներուն եղբայրական օգնութեան համար ձեռնարկուած համազգային հանգանակութիւնը, իր անդամիկ նիստը գումարեց Նուպարեան Մասենաղարանի ժողովարանին մէջ, 21 Յուլիս ուրբաթ օրը, եւ նախնական խորհրդակցութիւններէ վերջ որոշեց.

1. — Իր դիւանը կազմել հետեւեալ կերպով.

Առաքել Փաշա Նուպար

Տ. Պ. Էսմէրեան

Տ. Լ. Կ. Կերսան

Տ. Վ. Մալեգեան

Տ. Լ. Բաշայեան

Նախագահ,

Փոխ-Նախագահ,

Գանձապահ,

Ա. Ընդհ. Քարտուղար,

Բ. Ընդհ. Քարտուղար,

այգու խի ապահովելու համար Բարեգործականի Կեդր. Դիւանասան գործօն աշխատակցութիւնը:

2. — Շրջաբերական մը ուղղել զաղութեան բարեսիրական եւ հայրենասիրական կազմակերպութեանց խնդրելու համար որ, Հ. Բ. Ը. Միութեան Մասնահիւղներուն հետ համերաւաբար, ամեն շրջանակի պատկանող ազգայիններէ տեղական Յանձնախումբեր կազմեն եւ անմիջապէս իրենց շրջավայրին մէջ հանգանակութեան ձեռնարկեն, ուղղակի յարաբերուելով Յանձնաժողովիս հետ, եւ ղրկելով հանգանակուած գումարները, որպէս զի Հ. Բ. Ը. Միութեան խողովակով հետզհետէ Պէյրութ փոխադրուին իրենց նպատակին գործառնելու համար, Անթիլիասի Կարօղիկոսարանի հովանիին ներքեւ կազմուած Օգնութեան Յանձնաժողովին կողմէ:

3. — Կազմել Բարիքի Տեղական Յանձնախումբը նոյնպէս խառն, ապահովելու համար մասնակցութիւնը զանազան մարմիններու եւ անձնաւորութեանց, եւ հրաւիրել որ իր առաջին գումարումը ունենայ յառաջիկայ հինգշաբթի, 27 Յուլիս, Նուպարեան Մասենաղարանի մէջ, տեղական նուիրահաւաքութեան մասին անմիջական կարգադրութիւններ քննելու համար:

Յանձնաժողովս շնորհակալութեամբ արձանագրեց որ Առաքել Փաշա Նուպար սոյն հանգանակութիւնը բացած է 100,000 Ֆրանկով, ինչպէս եւ իրենց մասնակցութիւնը բերած են Տիկին Նոյեմի Գաբամանեան եւ Վահրամ Պէյ Նուպար արձանագրուելով 50,000 ալան Ֆրանկ:

Նոյնպէս զոնուանակութեամբ տեղեկացաւ որ Հ. Բ. Ը. Միութեան կողմէ երկու անգամէն հետազոտվ Պէյրութ փոխադրուած է 1,300 անգլ. ոսկի, որուն 3,500 տուար Նիւ-Նորքի մէջ արդէն բացուած հանգանակութեան հաւելոյն:

Ի դիմաց Արտակարգ Կեդր. Յանձնաժողովի

Ընդհ. Քարտուղար

Վ. ՄԱԼԷՋԵԱՆ

Բարիք, 24 Յուլիս 1939

Սաննազի Համազգային Արտ. Կեդր. Յանձնաժողովին ներկայիս կ'անդամակցին, ի հարկին ուրիշներու անդամակցութիւնը եւս խնդրելու առաջադրութեամբ. — Առաքել Փաշա Նուպար՝ Նախագահ, Տեառն Պ. Էսմէրեան Փոխ-Նախագահ, Լ. Լ. Կերսան Գանձապահ, Վ. Մալեգեան Ա. Ընդհ. Քարտուղար, Լ. Բաշայեան Բ. Ընդհ. Քարտուղար, Զարեհ Նուպար Պէյ, Արզումանեան, Վ. Էսմէրեան, Ա. Խաղիսեան, Ա. Կեննեան, Ա. Ճիւմպիւշեան, Մ. Նալպանեան, Ս. Զիլինկիւրեան, Ա. Զօպանեան, Ս. Սաղրեան, Տօք. Քօլօլեան: